# ՔԱՂՑԿԵՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

## Յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

### 1. ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Քաղցկեղի մատչելի և օպտիմալ բուժման հավասար հասանելիություն, ներառյալ երկրորդ կարծիքի իրավունք:

### 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիվանդության և բուժման մասին տեղեկություններ բուժող թիմից և այլ վստահելի աղբյուրներից, ներառյալ պացիենտական և մասնագիտական կազմակերպություններ:

### 3. ՈՐԱԿ, ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Տեղեկություններ բուժումն ապահովող կենտրոնում բուժման որակի և անվտանգության, փորձագիտության մակարդակի և ախտորոշված քաղցկեղի տեսակի առումով մինչ այժմ ձեռք բերված արդյունքների **մասին:**

### 4. ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՎ ԲԱԶՄԱԴԻՍՑԻՊԼԻՆԱՐ ԲՈՒԺՈՒՄ

Ստանալ բուժում մասնագիտացված և բազմադիսցիպլինար թիմի կողմից, որը նախընտրելի է, որ լինի հակաքաղցկեղային բուժման ցանցի մի մաս:

### 5. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Բուժմանը և խնամքին վերաբերող բոլոր հարցերի հետ կապված որոշումների համատեղ ընդունում բուժող թիմի հետ:

### 6. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացեք Ձեզ համապատասխանող ընթացիկ գիտական հետազոտությունների և դրանց մասնակցելու Ձեր կարողության և իրավասության մասին:

### 7. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿ

Քննարկեք բուժող թիմի հետ Ձեր առաջնահերթություններն ու նախասիրությունները՝ կյանքի հնարավորինս լավագույն որակի հասնելու առումով:

### 8.ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՋԱԿՑՈՂ ԵՎ ՊԱԼԻԱՏԻՎ ԽՆԱՄՔ

Ստացեք օպտիմալ աջակցող և պալիատիվ խնամք՝ ըստ անհրաժեշտության և հակաքաղցկեղային բուժման ցանկացած ժամանակահատվածում:

### 9. ԱՊՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱ

Բուժող թիմից ստացեք և քննարկեք Ձեր ապրելիության և ռեաբիլիտացիայի վերաբերյալ հստակ, կառավարվող և իրականանալի ծրագիր:

### 10. ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Լիովին վերաինտեգրվեք հասարակությանը և եղեք պաշտպանված քաղցկեղով պայմանավորված խարանից և խտրականությունից, որպեսզի հնարավորինս կարողանաք վերադառնալ նորմալ կյանքի:

european cancer ORGANISATION

www.europeancancer.org/code

info@europeancancer.org